

րայ, վասնզի ժայռ մը կար Անոր արեւելքը, եւ երբ յարձակիլ ուզողները յարձակման սկսան Ան ժայռէ պատին կողմը դարձաւ, և զերծ մնաց ամբոխին կատաղի յարձակումներէն: Յիսուս տարածեց իր բազուկները և ինկաւ ժայռէ պատին վրայ, ոչ թէ փախչիլը ուզելով, այլ Ան կրցաւ ինքզինքը ազատել ծանր հարուածներէն: Այս կերպով երբ ան ինկաւ պատին վրայ, ժայռը ընդունեց Անոր սուրբ մարմինը և ինքզինքը կակուղցնելով ներս ընդունեց Անոր մարմնոյն և բոլոր անգամներուն դրոշմը: Նշանները դրոշմուած են ժայռին վրայ եւ կատարելապէս ցոյց կը տրուին Անոր ձեռքերուն, բազուկներուն, գլխուն և գլխարկին, կուրծքին և հանդերձներուն ձեւերը: Անկարելի է կասկածիլ որ այս նշանները շինուած ըլլան ո՛ր եւ է արհեստական գործիքով, այլ այն պահուն, երբ Տէրը խռոված էր, կը վազէ դէպի պատը որ կ'ընդունի դրոշմը որ արհեստական չէ: Բաց աստի, ժայռը այնչափ կարծր էր որ անկարելի էր յարգարել զայն եւ երկաթէ ոչ մէկ գործիք կրնար փրցնել ո՛ր եւ է մաս: Աղօթելէ յետոյ, գացինք նոյն տեղւոյն մօտ եւ որչափ կրնայինք տարածեցինք մեր մարմինը, դրոշմուած նշաններուն վրայ դնելով մեր բազուկը, ձեռքերը, երեսը և կուրծքը՝ չափելով զայն մեր կերպարանքին հետ: Այս դրոշմները տեսած էի իմ առաջին ուխտաւորութեան ժամանակ, և երկու հարիւր տարի առաջ ալ, ուխտաւոր մը Ս. Երկրի նկարագրութեան ժամանակ յստակօրէն կը յիշէ ժայռին վրայի Յիսուսի Չարչարանաց այս դրոշմը (P. T. S. հատ. Ը. մասն Բ. էջ 476 - 477):

8. Քրիստոսի հանգստեան մատուռը. — Միջին դա-